

ՀՀ Արագածոտնի մարզպետարանում քննարկվել են ոռոգման ջրի մատակարարման խնդիրները

19.01.2019

Գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստական շրջանին ընդառաջ ՀՀ Արագածոտնի մարզպետարանում այսօր տեղի է ունեցել աշխատանքային խորհրդակցություն, որտեղ քննարկվել են ոռոգման ջրի մատակարարման վերաբերյալ հարցեր:

Խորհրդակցությանը մասնակցել են ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը, ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային կոմիտեի նախագահ Ինեսսա Գաբայանը, Արագածոտնի մարզպետարանի համապատասխան ոլորտի և մարզի տարածքը սպասարկող ՋՕԸ-երի պատասխանատուները:

Քննարկվել են ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման, ջրի արդար բաշխման, կորուստների նվազեցման և հավաքագրման ցուցանիշները բարձրացնելու վերաբերյալ հարցեր:

Ոլորտի պատասխանատուներին մարզպետը հորդորել է զարնան նախապատրաստական աշխատանքներն իրականացնել խիստ կանոնակարգված և ոռոգման համակարգն ամբողջությամբ նախապատրաստել ջրի անխափան մատակարարումն ապահովելուն: Կողմերը ձեռք են բերել պայմանավորվածություն ջրային ոլորտի խնդիրները քննարկելու նպատակով ևս մեկ խորհրդակցություն հրավիրելու վերաբերյալ: